«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

# ԿՈԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**2025-2028**

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Հայաստանի ազգային
պոլիտեխնիկական համալսարան»
հիմնադրամի Վանաձորի
մասնաճյուղի տնօրեն

_____Ա.Գ. Խառատյան

«05» _____2025թ.

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Հայաստանի ազգային
պոլիտեխնիկական համալսարան»
հիմնադրամի Վանաձորի մասնաճ.
արհեստակ. կազմակերպ. նախագահ

_____Տ. Ա. Մարգարյան

«05» _____2025թ.

**ՎԱՆԱՁՈՐ 2025**

Կոլեկտիվ պայմանագիրն ընդունված է ՀՀ օրենքների՝ աշխատանքային օրենսգրքի, Արհմիությունների մասին օրենքի, բարձրագույն և հետբուհական կրթության մասին օրենքի, ՀԱՊՀ հիմնադրամի Վանաձորի մասնաճյուղի և ՀԱՊՀ հիմնադրամի Վանաձորի մասնաճյուղի արհեստակցական կազմակերպության կանոնադրությունների համաձայն:

## 1. Ընդհանուր դրույթներ

**1.1** Սույն կոլեկտիվ պայմանագիրը համարվում է իրավական փաստաթուղթ, որով կարգավորվում են աշխատանքային և սոցիալ-տնտեսական հարաբերությունները «ՀԱՊՀ» հիմնադրամի Վանաձորի մասնաճյուղի ի դեմս տնօրեն Արմեն Գերասիմի Խառատյանի (հետագայում «գործատու») և «ՀԱՊՀ» հիմնադրամի Վանաձորի մասնաճյուղի արհեստակցական կազմակերպության ի դեմս նախագահ Տաթևիկ Արթուրի Մարգարյանի (հետագայում «արհմիություն») միջև:

**1.2** Սույն կոլեկտիվ պայմանագրի առարկա է հանդիսանում գործատուի կողմից օրենսդրության համաձայն աշխատանքի պայմանների, աշխատանքի վարձատրության և դրանց հետ կապված այլ սոցիալական հարցերի լուծման նկատմամբ տրամադրվող երաշխիքների և արտոնությունների վերաբերյալ լրացուցիչ դրույթների սահմանումը:

**1.3** Արհմիութենական կազմակերպության կոմիտեն համարվում է աշխատանքային կոլեկտիվի միակ լիազոր ներկայացուցիչը աշխատանքային պայմանագրի կազմման և կնքման ժամանակ, աշխատանքի վարձատրման, ողջ կոլեկտիվի նորմալ գործունեության համար օպտիմալ աշխատանքային պայմանների, ինչպես նաև սոցիալական պաշտպանվածության հարցերի և հանգստի կազմակերպման հարցերի նվիրված խորհրդակցություններում:

**1.4** Կոլեկտիվ պայմանագրի կողմերը պարտավորվում են համագործակցել սոցիալական գործընկերության հիմնական սկզբունքներով և իրականացնել աշխատողների և գործատուի շահերի համաձայնեցումը կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններում:

## 2. Աշխատանքային պայմանագիր

**2.1** Աշխատանքային հարաբերությունները ձևակերպվում են գործատուի հրամանով՝ գրավոր աշխատանքային պայմանագիր կնքելու հիման վրա: Աշխատանքային պայմանագիրը ներառում է գործատուի և աշխատողի բոլոր իրավունքները և պարտականությունները, որոնք բխում են կատարվող աշխատանքի առանձնահատկություններից:

**2.2** Աշխատանքային պայմանագիրը չի կարող վատացնել աշխատողի աշխատանքային պայմանները, որոնք սահմանված են գործող օրենսդրությամբ, ինչպես նաև այն սույն պայմանագրով:

**2.3** Գործատուն և աշխատողները պարտավորվում են կատարել աշխատանքային պայմանագրի պայմանները: Գործատուն իրավասու չէ պահանջել աշխատողից կատարել աշխատանք, որը նախատեսված չէ աշխատանքային պայմանագրով, բացառությամբ սահմանված դեպքերի:

**2.4** Համալսարանի մասնաճյուղի կառուցվածքի փոփոխության, նրա վերակազմակերպման, ինչպես նաև հաստիքների և աշխատողների թվաքանակի կրճատման հետ կապված հարցերը գործատուն լուծում է արհմիության հետ խորհրդակցելով:

**2.5** Գործատուն պարտավոր է ոչ ուշ, քան երեք ամիս առաջ արհմիությանը տեղեկատվություն ներկայացնել աշխատողների թվաքանակի կրճատման ժամանակացույցի և առկա թափուր տեղերի մասին:

**2.6** Աշխատանքում թողնելու նախապատվությունը, բացի օրենքով նախատեսված դեպքերի, տալ հետևյալ աշխատողներին.

ա) այն աշխատողին, ով երբևէ թույլ չի տվել կարգապահական խախտում, իր աշխատանքային պարտավորությունները կատարել է պատշաճ ձևով,

բ) աշխատանքային երեք տարին չլրացած, գիտամանակավարժական գործունեությամբ զբաղվող երիտասարդներին,

գ) միայնակ ծնողին, ով խնամքի տակ ունի անչափահաս կամ հաշմանդամություն ունեցող երեխա:

**2.7** Գործատուի նախաձեռնությամբ արհմիության անդամ հանդիսացող աշխատողների աշխատանքային պայմանագրի լուծումը իրականացնել արհմիության նախնական համաձայնությամբ, բացառությամբ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերով և 124-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերի:

**2.8** Կողմերը պարտավորվում են միջոցներ ձեռնարկել աշխատողների բարեկեցության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ՝ ավելացնելով նրանց համար իրականացվող սոցիալական ծրագրերը:

## 3. Աշխատաժամանակ, հանգիստ

**3.1** Համալսարանում աշխատաժամանակի տևողությունը չի կարող գերազանցել շաբաթական 40 ժամը: Ընդմիջման սկիզբը և ավարտը սահմանվում է արհմիության հետ համաձայնեցնելով:

**3.2** Աշխատողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ երկու հանգստյան օրով:



**3.3** Պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար սահմանել կրճատ աշխատաժամանակ՝ շաբաթական 36 ժամ:

**3.5** Հանգստի և սնվելու համար ընդմիջման սկիզբը և ավարտը սահմանել հրամանով՝ արհմիության հետ համաձայնեցված:

**3.6** Հերթական արձակուրդների տրամադրման ժամանակացույցը կազմվում է և հաստատվում է գործատուի կողմից, արհմիության հետ համաձայնեցնելով, և ծանոթացվում է բոլոր աշխատողներին:

**3.7** Աշխատողին վճարովի արձակուրդ ստանալու իրավունք վերապահել հետևյալ դեպքերում.

ա) աշխատողի ամուսնության համար՝ 3 աշխատանքային օր

բ) աշխատողի երեխայի ամուսնության համար՝ 3 աշխատանքային օր

գ) հարազատի (ընտանիքի անդամ) մահվան դեպքում՝ 3 աշխատանքային օր:

**3.8** Մինչև անընդմեջ աշխատանքի վեց ամիսը լրանալը աշխատողի խնդրանքով ամենամյա արձակուրդ տրամադրել.

ա) աշխատողի բուժման նպատակով,

բ) երեխայի բուժման նպատակով,

գ) հաշմանդամ աշխատողին կամ ընտանիքի հիվանդ անդամին խնամող աշխատողին:

## 4. Աշխատանքային վարձատրություն

**4.1** Հետևողականորեն իրականացնել միջոցառումներ պետական բյուջեի և արտաբյուջետային միջոցներով ձևավորվող մասնաճյուղի բյուջեի ընձեռած հնարավորությունների սահմաններում բոլոր աշխատողների իրական աշխատավարձի բարձրացման ուղղությամբ:

**4.2** Արտաժամյա, տոնական օրերին, գիշերային ժամերին կատարած աշխատանքը վարձատրել օրենսդրությամբ սահմանված կարգով:

**4.3** Առողջության համար վնասակար պայմաններ ունեցող աշխատանքի կատարման համար աշխատողին վճարել հավելում միջին աշխատավարձի 30 տոկոսի չափով:

**4.4** Աշխատանքի ծավալի ավելացման դեպքում՝ սահմանել աշխատանքի վարձատրության հավելում՝ գործող աշխատավարձի մինչև 50 տոկոսի չափով:

**4.5** Աշխատավարձը վճարել ամիսը մեկ անգամ մինչև հաջորդ ամսվա 15-ը:

**4.6** Արձակուրդային աշխատավարձը վճարել ոչ ուշ, քան արձակուրդը սկսվելուց 3 օր առաջ:

## 5. Աշխատանքի պայմանները

**5.1 Գործատուն պարտավորվում է.**

**5.1.1** Գործող իրավական ակտերի պահանջներին համապատասխան յուրաքանչյուր աշխատողի համար ապահովել կահավորված, անվտանգ, հարմար և առողջության համար անվնաս աշխատատեղ և շրջապատող միջավայր:

**5.1.2** Գնահատել աշխատողների անվտանգության և առողջության համար հնարավոր ռիսկը:

**5.1.3** Սահմանել հատուկ մասնագիտական գիտելիքներ պահանջող աշխատանքների ցանկը, որակավորման պահանջները և որակավորման քննությունների անցկացման կարգը:

**5.1.4** Մշակել յուրաքանչյուր աշխատանք կատարելու համար անվտանգության ապահովման հրահանգ:

**5.1.5** Անցկացնել աշխատանքի անվտանգության կանոնների ուսուցում և հրահանգավորում (նախնական և ընթացիկ):

**5.1.6** Չթույլատրել աշխատողին անցնելու աշխատանքային պարտականությունների կատարմանը, առանց աշխատանքի անվտանգության կանոնների ուսուցում կամ հրահանգավորում անցնելու:

**5.1.7** Կախված իրականացվող աշխատանքի վտանգավորության աստիճանի՝ հաստատել պարտադիր և պարբերական բժշկական զննություն անցնող աշխատակիցների ցանկը և ժամանակացույցը:

**5.1.8** Աշխատողների պարտադիր և պարբերական բժշկական զննությունը իրականացնել աշխատանքային ժամերին, գործատուի հաշվին:

**5.1.9** Գործող իրավական ակտերով սահմանված կարգով ապահովել աշխատանքի ժամանակավոր դադարեցումը, եթե աշխատատեղերում առաջացել են աշխատանքի անվտանգության անապահով պայմաններ:

**5.1.10** Բժշկական հետազոտություն անցնելու անհրաժեշտության դեպքում հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողն ազատվում է աշխատանքային պարտականությունների կատարումից՝ պահպանելով աշխատավարձը:



**5.1.11** Մինչև 2 տարեկան երեխա ունեցող կնոջը, բացի հանգստի և սնվելու համար տրամադրվող ընդմիջման ժամերից, յուրաքանչյուր երեք ժամը մեկ տրամադրվում է լրացուցիչ ընդմիջում երեխային կերակրելու համար՝ կես ժամից ոչ պակաս տևողությամբ:

**5.2 Արհմիությունը պարտավորվում է.**

**5.2.1** Աջակցել գործատուի կողմից աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման ուղղությամբ տարվող միջոցառումների իրականացմանը:

**5.2.2** Հարկ եղած դեպքերում առաջարկություն ներկայացնել գործատուի կողմից այն կատարվելիք աշխատանքների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ է իրականացնել առանձին աշխատատեղերում աշխատանքի անվտանգության և առողջության ապահովման վիճակի բարելավման համար:

**5.2.3** Ներկայացնել առաջարկություն աշխատանքի ժամանակավորապես դադարեցման համար, եթե աշխատատեղերում առկա են նորմատիվ իրավական ակտերով սահմանված երաշխիքների և արտոնությունների կիրառման խնդիրների նկատմամբ:

**5.3 Կողմերը պարտավոր են.**

**5.3.1** Աշխատանքի վայրում դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների պատճառները պարզելու նպատակով օրենքով սահմանված կարգով անցկացնել համատեղ ծառայողական քննություն:

**5.3.2** Ստեղծել աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման գծով համատեղ հանձնաժողով:

## 6. Սոցիալական հարցեր

**6.1 Գործատուն պարտավորվում է.**

**6.1.1** Յուրաքանչյուր տարվա փաստացի գոյացած շահույթի 40 տոկոսը հատկացնել կոլեկտիվի սոցիալ-կենցաղային տարբեր խնդիրների լուծման համար, մասնավորապես.

ա)աշխատակիցների բուժման ծախսերի լրիվ կամ մասնակի փոխհատուցման համար,

բ) աշխատակիցների հանգստի և առողջության պահպանման համար,

գ)սոցիալապես խիստ անապահով աշխատակիցներին, պատերազմի վետերաններին, հաշմանդամներին ֆինանսական օգնություն ցույց տալու համար,

դ) մշակութային և սպորտային միջոցառումների կազմակերպման համար:

**6.2 Արհմիությունը պարտավորվում է.**

**6.2.1** Աշխատողների սոցիալ-կենցաղային խնդիրների լուծման, ինչպես նաև տարբեր միջոցառումների կազմակերպման և անցկացման համար հատկացնել արհմիության միջոցների 45 տոկոսը:

**6.2.2** Կոլեկտիվի անդամների և նրանց ընտանիքների հանգիստը կազմակերպել ՀՀ ուսումնամարզական և առողջարանական բազաներում և իրականացնել դրա վերահսկողությունը:

**6.3 Կողմերը պարտավոր են.**

**6.3.1** Յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակում տնօրինության և արհկոմիտեի համատեղ նիստում քննարկել ուսումնամարզական և առողջարանական բազաների աշխատանքներին վերաբերող ծրագրերը, ինչպես նաև աշխատակիցների հանգստի կազմակերպման ժամանակացույցը, ուղեգրերի գնագոյացման և հատկացման կարգը:



## 7. Գործատուի և արհմիության հարաբերությունները

**7.1** Կողմերն իրենց վրա են վերցնում բանակցությունների ընթացքի կանոնների պահպանման կոլեկտիվ պայմանագրի կնքման և պարտավորությունների կատարման պատասխանատվությունը:

**7.2** Արհմիությունն իրավասու է առաջարկություններ ներկայացնել աշխատանքային և դրա հետ կապված մասնաճյուղի սոցիալ-տնտեսական զարգացման հարցերի վերաբերյալ: Գործատուն պարտավորվում է մինչև 15 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրել առաջարկությունները և գրավոր պատասխանել արհմիությանը:

**7.3** Աշխատողների աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական շահերն ու իրավունքները շոշափող որոշումները գործատուն պարտավոր է ընդունել հաշվի առնելով արհմիության կարծիքը: Համապատասխան որոշումների (հրամանների) նախագծերը ներկայացնել արհմիություն՝ հրամանը հրապարակելու ժամկետից 5 աշխատանքային օր առաջ:

Արհմիությունը պարտավոր է մինչև 2 աշխատանքային օրվա ընթացքում գործատուին գրավոր հայտնել իր կարծիքը:

**7.4 Գործատուն երաշխավորում է.**

ա) մասնաճյուղի արհկոմիտեի նախագահին ընդգրկել մասնաճյուղի համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներում ՀԱՊՀ հիմնադրամի Վանաձորի մասնաճյուղի կանոնադրությամբ սահմանված կարգով,

բ) աշխատողների սոցիալ-տնտեսական հարցերի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել արհմիությանը,

գ) արհմիության գործունեության համար անվճար տրամադրել աշխատասենյակներ հնարավոր կահավորումով, համապատասխան սրահներ համաժողովներ անցկացնելու համար. կապի միջոցներ՝ ներառյալ համակարգիչ,

դ) արհմիության անդամների անդամավճարը գանձել կենտրոնացված կարգով և փոխանցել արհմիության հաշվին տվյալ ամսվա աշխատավարձը վճարելուց հետո, մինչև 5 օրվա ընթացքում,

ե) համալսարանի բաժիններից արհմիության ղեկավար մարմնում ընտրված և հիմնական աշխատանքից չազատված աշխատողներից արհմիության միջոցառումներին մասնակցելու կամ որակավորումը

բարձրացնելու համար աշխատանքային պարտականություններից ազատել տարեկան մինչև տաս աշխատանքային օր ժամկետով՝ պահպանելով աշխատավարձը,

գ) արհմիության պահանջով լուծել աշխատանքային պայմանագիրը սույն պարտավորությունների չկատարման հարցում մեղավոր պաշտոնատար անձի հետ:

## 8. Եզրափակիչ դրույթներ

**8.1** Սույն կոլեկտիվ պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2025 թվականի սեպտեմբերի 1-ից և գործում է մինչև 2025 թվականի սեպտեմբերի 1-ը:

**8.2** Գործատուն աշխատողներին ծանոթացնում է կոլեկտիվ պայմանագրի բովանդակությանը այն ստորագրելու օրվանից 15 օրվա ընթացքում:

**8.3** Սույն կոլեկտիվ պայմանագրի գործունեության ժամկետի ընթացքում փոփոխություններ և լրացումներ կարող են իրականացվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ կողմերից մեկի գրավոր ներկայացված առաջարկությունը մյուս կողմին ներկայացնելուց 10 օրվա ընթացքում համատեղ քննարկման և համապատասխան արձանագրություն կազմելու միջոցով: Կողմերի անհամաձայնության դեպքերում այն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

**8.4** Կոլեկտիվ պայմանագրի կատարման նկատմամբ հսկողությունը իրականացնում են այն ստորագրած կողմերը:

**8.5** Կողմերից յուրաքանչյուրը վերահսկողություն է իրականացնում սույն պայմանագրով ստանձնած պարտականությունների կատարման ուղղությամբ:

**8.6** Կողմերն իրավունք ունեն երկարաձգելու սույն կոլեկտիվ պայմանագրի գործողության ժամկետը երեք տարուց ոչ ավելի ժամանակով:

Կոլեկտիվ պայմանագիրը ստորագրվում է երկու հավասարազոր օրինակից և ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: